ՕԳՏԱԿԱՐ ՆՎ ՀԵՏԱՔՐՔԻՐ ԶՆՈՒՆԱՐԿՈՒՄ

1986 թ. սեպտեմբերի 9—15-ը մերձմոսկովյան Զվենիգորոդ քաղաքում ընթացան երիտասարդ գիտնականների համամիութենական դպրոցի աշխատանքները։ Դպրոցի կազմակերպիչներն են ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ՍՍՀՄ պատմության ինստիտուտը, Համլկեմ կենտկոմը, Համամիութենական «Գիտելիք» ընկերության վարչությունը։ Դպրոցի նպատակն է երիտասարդ պատմաբան գիտնականներին ծանոթացնել պատմագիտության նվաճումներին, միաժամանակ ներկայացնելով նաև արդեն հայտնի և իրենց ճշմարտացիությունն ապացուցած կոնցեպցիաները։ Դպրոցը կրում է թեմատիկ բնույթ։ Այս անգամ նրա թեման էր «Դասակարգերը և դասակարգային պայքարը հայրենական պատմության մեջ։ Սովետական երիտասարդության պատմական գիտակցության ձևավորումը»։

Աշխատանքների ծրագիրը կազմված էր հետեվյալ սկզբունքով. յուրաքանչյուր օր նվիրված էր պատմական որևէ ժամանակաշրջանի։ Առաջին զեկուցումը քննարկում էր դասակարգային պայքարի ուսումնասիրության մեթոդոլոգիական հարցերը և կոչվում էր «Դասակարգերի և դասակարգային պայքարի մարքս-լենինյան տեսությունը»։ Այդ զեկուցումով հանդես եկավ պատմ. գիտ. թեկնածու Լ. Դանիլովան։ Հեղինակի զեկուցման հիմնական դրույթն այն էր, որ դասակարգային պայքարը մինչ բուրժուազիայի հանդես գալը կրել է տարերային բնույթ, զուրկ է եղել որոշակի ծրագրից, սոցիալական նորացման գաղափարից։ Ծ՛վ ստրուկների ապստամբությունները և գյուղացիական պատերազմները, լինելով տիրող սոցիալական կարգի դեմ ուղղված ակտիվ բողոք, այդ կարգը վերափոխելու պահանջ և նպատակ չեն առաջադրել։ Որոշակի ժամանակահատվածում հասնելով հաջողության տիրող կարգերի դեմ, ընդվզողները պահպանել են նույն սոցիալական կառուցվածքը, և դա էլ հենց եղել է նրանց պարտության ամենագլխավոր պատճառը։

Բուրժուազիան հանդես գալով որպես ինքնուրույն դասակարգ և սկսելով պայքարը հին հասարակարգի վերափոխման համար, ուներ որոշակի գաղափարախոսություն և սոցիալական նպատակ, որոնց դրույթներն այս կամ այն հետևողականությամբ իրագործվեցին բուրժուական հեղափոխությունների և դրանցից հետո ընկած ժամանակաշրջանում։ Սակայն ընդհանուր առմամբ դրանց իրագործումը մնաց անավարտ։

Դասակարգային պայքարի առավել բարձր, ավարտուն փուլը հանդիսացավ պրոլետարական էտապը։ Պրոլետարիատը իր գաղափարախոսությամբ ներկայացնում էր հասարակության ամենալայն խավերի շահերը և չուներ նախորդ դասակարգերին բնորոշ սահմանափակությունն ու անհետևողականությունը։ Սոցիալիստական հեղափոխության միջոցով հասնելով հաղթանակի և դառնալով հասարակության իշխող ուժ, պրոլետարիատը շարունակում է իրագործել նոր հասարակարգի կառուցման իր ծրագրային դրույթները և ապահովում առաջընթաց զարգացումը։

Պատմ. գիտ. թեկնածու Վ. Դուռնովցևն իր «Դասակարգերի և կուսակցությունների պայքարի պատմության արտացոլումը պատմական գիտակցության մեջ» զեկուցումը նվիրել էր սովետական պատմագիտության մեջ անբավարար ուսումնասիրված մի հարցի։ Զեկուցողը նշեց, որ մինչ այժմ մեր պատմաբանների ուշադրության կենտրոնում է գտնվել գերազանցապես շահագործվող դասակարգերի պատմությունը։ Նման իրավիճակը հանգեցնում է պատմության ուսումնասիրության միակողմանիության։ Ինչպես որ շահագործվող դասակարգն է ժամանակի ընթացքում ամփոփում և կուտակում իր նախորդների պայքարի դասերն ու փորձը, այնպես էլ իշխող դասակարգն է իր համար անհրաժեշտ հետևություններ անում, որը նրան օգնում է իշխանությունը պահպանելու համար գնալ զիջումների, խուսանավել։ Իշխող դասակարգերի գաղափարախոսության էվոլյուցիայի ուսումնասիրությունը կամրողջացնի դասակարգային պայքարի պատմության լուսաբանումը։

«Դասակարգային պայքարի հիմնական էտապները և ձևերը ֆեոդալական Ռուսաստանում (11—18-րդ դարեր)», այսպես էր կոչվում պատմ. գիտ. դոկտոր Վ. Բուգանովի զեկուցումը։ Հեղինակն իր զեկուցումը հիմնականում նվիրել էր գյուղացիական ապստամբությունների (Ի. Բոլոտնիկովի, Ս. Ռազինի, Ե. Պուգաչովի գլխավորությամբ) մի քանի հարցերի քննությանը։ Այդ

ապստամբությունները դասակարգային պայքարի ակտիվ ձևի օրինակներից են՝ ի տարբերություն դրանց նախորդող շրջանի, երբ դասակարգային պայքարն առավելապես պասիվ բնույթ էր կրում (խնդրագրեր, բողոքներ և այլն)։ Գյուղացիական ապստամբությունները սկզբում ծագելով որպես կազակային խռովություններ, այնուհետև իրենց ոլորտն են ներառել բավականին լայն ժողովրդական զանգվածներ։ Սոցիալական լայն բազան էր, որ հնարավորություն էր տալիս մղել երկարատև զինված պայքար և հասնել հաջողության։ Սակայն այդ հաջողությունները կարճատև էին և գյուղացիական պատերազմներն անխուսափելիորեն դատապարտված էին պարտության։

Դպրոցի աշխատանքի երկրորդ օրը նվիրված էր կապիտալիզմի ժամանակաշրջանում դասակարգային պայքարի հարցերի քննարկմանը։ Պատմ. գիտ. թեկնածու Ս. Միրոնենկոյի զեկուցման թեման էր «Դասակարգային պայքարը և դեկաբրիզմի գաղափարախոսության էվոլյուցիան»։ Դեկաբրիզմը հանդիսացավ Ռուսաստանում դասակարգային պայքարի նոր փուլի սկիզբը, երբ պատմական ասպարեզ էր դուրս գալիս բուրժուազիան։ Հեղինակի առաջ քաշած գրույթն այն էր, որ դեկաբրիզմը, սկզբում ունենալով ազնվականական գաղափարախոսություն, աստիճանաբար էվոլյուցիա է ապրել դեպի հեղափոխական-դեմոկրատիզմը՝ հանձին Դ. Ֆոնվիզինի հայացքների։

Բանվոր դասակարգի կազմավորման, կառուցվածքային փոփոխությունների ուսումնասիրության հարցերին էր նվիրված պատմ. գիտ. դոկտոր Վ. Լավյերիչևի «Բանվոր դասակարգը ետռեֆորմյան Ռուսաստանում. մշակման արդյունքները և խնդիրները» զեկուցումը։

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Անֆիմովն իր «Գյուղացիությունը նախահեղափոխական Ռուսաստանի սոցիալական կառուցվածքում և 19-րդ դարի երկրորդ կեսի— 20-րդ դարի սկզբի հասարակական-քաղաքական պայքարում» զեկուցման մեջ նշեց, որ գյուղացիությունը միշտ էլ գտնվել է պատմաբանների ուշադրության կենտրոնում և այդ պրոբլեմն իր լուսաբանման մակարդակով գրավում է առաջին տեղերից մեկը։ Նման պայմաններում պետք է քննվեն հատկապես ճշտման կարիք ունեցող հարցերը։ Զեկուցողը գտնում է, որ աղբյուրների ընձեռած բոլոր փաստերը չեն, որ կարող են մեկնաբանվել որպես դասակարգային պայքարի արտահայտություններ։ Դա վերաբերում է հատկապես հրկիզումներին, որոնց զգալի քանակությունը այլ դրդապատճառներ ուներ։

Հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի հարցերին էր նվիրված նաև պատմ. գիտ. դոկտոր Ա. Կորելինի «Ազնվականության տեղը և դերը 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի ռուսական հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքում» զեկուցումը։ Ա. Կորելինը ևս շեշտեց շահագործող դասակարգերի պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը և անբավարարությունը։ Այդ դասակարգերը հասարակական մեխանիզմի անբաժանելի մասերն են և չեն կարող ոչ անտեսվել և ոչ էլ դուրս գցվել պատմական պրոցեսից։ Նախկինում թույլ տրված նման մոտեցումները պետք է մերժվեն։

Պարբերական մամուլի օրգանները բնութագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել գրանցում հրապարակված նյութերի գաղափարական ուղղվածությամբ։ Այդ սկզբունքն էր համարում առավել օբյեկտիվը պատմ. գիտ. դոկտոր Բ. Բալուևն իր «Պարբերական մամուլի օրգանների դասակարգային բնութագրման փորձը սովետական պատմագիտությունում» զեկուցման մեջ։

Երրորդ և չորրորդ օրերին դպրոցը քննարկման առարկա դարձրեց դասակարգային հարաբերությունները սոցիալիզմի ժամանակաշրջանում։ Լսվեցին հետևյալ զեկուցումները. Տ. Օսիպովա՝ «Գյուղացիությունը քաղաքացիական պատերազմում», Յու. Վ. Մուխաչև՝ «Դասակարգային պայքարը և անցումային շրջանը ՍՍՀՄ-ում. ձևեր, օրինաչափություններ», Ն. Իվնիցկի՝ «Դասակարգային պայքարը գյուղում անցումային շրջանում», Յու. Շարապով՝ «Վ. Ի. Լենինը դասակարգային պայքարի ձևերի փոփոխման մասին ՆԷՊ-ին անցման շրջանում»։

Լսվեցին նաև այլ զեկուցումներ։

Անցկացվեցին նաև կոլոկվիումներ՝ հետևյալ թեմաներով. «Դասակարգային պայքարի պրոբլեմները ֆեոդալական Ռուսաստանում», «Ազնվական հասարակության ձևավորման պրոբլեմները. պատմական ասպեկտ», «Սովետական արտաքին քաղաքականության դասակարգային բնույթը»։ Այդ կոլոկվիումները ղեկավարում էին պատմ. գիտ. դոկտորներ Վ. Բուգանովը, Վ. Դմիտրենկոն, Ա. Պրոտոպոպովը։

Դպրոցի աշխատանքի վերջին օրը կազմակերպվեց «Կլոր սեղան՝ «ՍՄԿԿ XXVII համագումարը և սովետական հասարակության զարգացման հրատապ պրոբլեմները» թեմայով։ Այն ղեկավարում էր պատմ. գիտ. դոկտոր Գ. Եսկովը։

Սեպտեմբերի 15-ին դպրոցն ավարտեց իր աշխատանքները։ Դպրոցի հերթական նստաշրջանը տեղի կունենա 1988 թ. և նվիրված կլինի ազգային հարցի լուսաբանմանը։

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ